

աստուածները կը պաշտուէին նաեւ Հայերէն: Ապացոյց են հայ աստուածներու անունները, — Արամազդ, Անահիտ, Տիր, Միհր:

Հայերը ընդօրինակեցին նաեւ պարսկական բարբերը: Հայոց արքունիքը տեսակ մը ընդօրինակութիւնն էր պարսից արքայական պալատներուն:

Չորրորդ դարու կէսէն յետոյ է, որ հելլէն քաղաքակրթութիւնը Հայաստան կը մտնէ: Այդ կը պատահի այն ատեն, երբ հորիզոնին վրայ կ'երեւայ Մեծն Ալեքսանդր (323 Ք. Ա.), կ'աշխարհակալէ դէպի Արեւելք, Ասիոյ մէջ կը ստեղծէ կէս-յունական թագաւորութիւններ եւ իր ոտք կոխած տեղը կը ցանէ հելլէն մշակոյթն ու արուեստին սերմերը: Մեծ Մակեդոնացին է, որ կը բանայ Արեւմուտքի դռները Մերձաւոր Արեւելքին, ուր ապրող ժողովուրդները հազարաւոր տարիներ կ'ըզիպցած մնացեր էին: Ու ամբողջ երեք դար, — Դ. դարու վերջերէն մինչեւ Ա. դարու կէսերը Քրիստոսէ առաջ, — Ելլազան իր կնիքը դրաւ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներուն բարբերուն ու արուեստին վրայ:

Եւ ուժեղ էր կնիքը, զոր այդ ժողովուրդներուն վրայ դրաւ քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճանին հասած Ելլազան: Այս այն խաղաղ շարժումը չէր, զոր յոյները հինէն ի վեր կը սիրէին Ասիոյ զանազան կողմերը՝ առեւտրական եւ այլ շահաւէտ նպատակներու համար: Ինչ որ իրականացուց 22 տարեկան զինուորական այդ հանձարը, Ալեքսանդր Մակեդոնացին, հելլէն քաղաքակրթութեան բունի մուտքն էր Մօտաւոր Ասիոյ ժողովուրդներուն մէջ:

Հայ ժողովուրդը չէր կրնար անմասն մնալ քաղաքակրթութեան այս արշաւանքէն: Հելլէնականութիւնը ոտք կոխեց նաեւ Հայաստան, յեղաշրջելով բարբերն ու արուեստները: Հայոց տաճարներուն մէջ սկսան երեւալ ողիմպիական արձանները՝ հայ ազգային աստուածներուն առնթեր: Հայերը սկսան սորվիլ յունարէնը, կարդալ հելլէն հեղինակներ, հետաքրքրուիլ յոյն դեղարուեստով: Հայ ուսանողներու արշաւանք մը սկսաւ դէպի Աթէնք եւ Ելլազայի միւս կեղրոնները: Հայ թագաւորներու պալատները սկսան հրաւիրուիլ հել-

լէն հռետորներ, բանաստեղծներ, գիտնականներ, նկարիչներ: Հայաստանի մայրաքաղաքներուն մէջ սկսան բեմադրուիլ հելլէն ողբերգուները: Հայաստան կուգային նաեւ յոյն դերասաններ:

Ինչ որ յատկանշական է այս յեղաշրջման պատմութեան մէջ, այն է թէ հայ ժողովուրդը իր դիրքը բացած է հելլէն մտքին ու արուեստին՝ սիրով, հաճոյքով, մինչ ուրիշ տեղեր զօրաւոր եղած է տեղացիներու ընդդիմութիւնը նորամուտ քաղաքակրթութեան դէմ: Հայ ժողովուրդը դուրդուրանքով ընդունած է արեւմուտքէն իրեն եկած լոյսը:

«Ընդհանրապէս կը տեսնուի որ, — կ'ըսէ օտար հեղինակ մը, — հայ ազնուականութիւնը նուազ ընդդիմութիւն կ'ընէ քան պարթեականներ, ընդունելու համար, բարեացակամութեամբ եւ յաջողութեան յոյսով, արեւմտեան քաղաքակրթութիւնը: Ասոր թող իբր ապացոյց ծառայեն ոչ թէ Արտաւազդի դասական կրթութիւնը, այլ նաեւ քրիստոնէութեան մուտքը, որ այնքան շուտ կատարուած է Հայոց մէջ»:  
(A. Abruzzese: Le relazioni fra l'Armenia e Roma al tempo di Augusto. Padova. 1903. էջ 12):

Այդ շրջանին է թատրոնի ծագումը Հայոց մէջ: Ան, իբրեւ մէկը մշակոյթի ամենէն կարեւոր թեւերէն, եւ իբրեւ հելլէն մտքին ամենէն ուժեղ երեւոյթներէն մէկը, չէր կրնար մուտք չզործել Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ, եւ անոնց կարգին նաեւ Հայաստան: Յոյներուն հետ կը մտնէ ուրեմն բեմը մեր մէջ: Ու երբ հայ թատրոն կ'ըսենք, պէտք է անմիջապէս մեր մտքին առջեւ հելլէն թատրոնը գայ, որովհետեւ Հայաստան հելլէն բեմական արուեստը միայն ճանչցաւ, գոնէ այդ սկզբնական շրջանին:

**ԱՐՏԱՇԷՍ Ա. Ի ՕՐՈՎ**  
(190-161, ՔՄ. է ԱՌԱՁ)

Արտաշէս Ա. առաջին հայ վեհապետը եղաւ, որ իսկական իմաստով պետութիւն մը հիմնեց: Իրմէ առաջ հայ ժողովուրդը դուրկ էր պետական միութենէ: Հայերը, նախ քան Արտաշէս, ոչ միայն զրկուած էին բացարձակ